

Մեղաւորին եւ արգարին
Կպաշարէ սուգ Յախիժ:

Մէկ անգամոյ մարդկայնութեան
Թէեւ մահը կը յիշես,
Բայց կարծես թէ բոլոր բնութեան
Վերայ անշուք քոյ ձգես.
Եւ մօտակայ բոլոր մարդիկ
Թողով հրճուանք յահ ու վախ,
Միմեանց կ'իշեն իւրեանց կընիք
Թէ կեանքէն վերջ կուզայ մահ:

Այն մահէ չլինիր խոյս
Այն մանգաղէն սայրասուք,
Բայց խաւարին յաջորդն է լոյս
Եւ լաւ գործոց ճոխ տրիտուք.
Չսարսուփինք այն հնչիւնէն
Որ մահադոյժ է յանկարծ,
Յաղթող խոյն է մեր ապաւէն
Այն որ պաշտպան էր մեր Հարց:

Կասին նշան մեր հայրերուն
Խարխսի էր միշտ հաւատոյ,
Եկեղեցիք վանքեր սիրուն,
Ազբիրք յուսոյ եւ սիրոյ,
Խաչով դրոշմներ մեր Յախառ
Երբ զանգակը կ'զարնէ.
Ամուր պահեմք մեր հաւատը
Այն մեզ թէ յոյս թէ կեանք է:

Ս. Մարութեանց

Կապիկն որ... զինչ տեսանէ ի մարդոյ,
զայն եւ ինքն առնէ: Աւ ետես զե ձկնորսն
ձգեաց զուռկան ի վերայ ձկանցն, եւ ինքն
գնաց ի հաց: Աւ կապիկն իջեալ ի ծառէն
էսա զուռկանսն, եւ նման ձկնորսի կամեցաւ
ձգել ի վերայ ձկանցն. ոյլ ինքն ըմբռնեցաւ
ի նմանէ, եւ ասէ լալով, յիրաւ ի ըմբռնեցոյ
վասնզե հանց կողմ ձգեցի զձեռքս՝ որ ոչ էի
հմուտ:

Յուցանէ առակս, թէ՛ ո՛վ մարդ, օտարաց
մի՛ ձեռն արկաներ եւ մի՛ ցանկար գործոյն,
որ չես հմուտ եւ չէ՛ քեզ պատշաճ, թէ՛ մարմ-
նաւոր եւ թէ՛ հոգեւոր աստիճանս. զե կորուստ
լինի քեզ եւ ոչ շահ:

(Աղուեսագիրք)

Երկրակեցան մկուռք ի մի տեղ եւ սկսան
հետ միմեանց խօսել, եւ ասին. ընդէ՛ր է որ
մեք ոչ զրեհ ունինք եւ ոչ զեղծիւք, որ կա-
տուն զմեզ զիւրաւ բռնէ, եկայք զե խոյ-
հեցուք բարի հնար մի. եւ սրեցին փայտս
եւ կապեցին ի զլուսս իւրեանց, եւ ասին,
երբոր կատուն գայ, կուռինք հետ՝ որ զմեզ
չբռնէ: Եւ ահա եկն կատու մի եւ մկերն փախ-
եան եւ ոչ կարացին ընդ ծակն ի ներս մտա-
նել. եւ կատուն սկսաւ ջարդել զամենեսեանս:

(Անդ)

ՀԱՆԵԼ ԱՌԻՐ

4.

Այն ինչ աշխարհ է արարած,
որ կարօտի լուսաւորաց.
որքան օղբ լինի վճիտ
նորա համար է միշտ ամպած:

2.

Այն ինչ տուն է անհիմն փոքրիկ,
յորում բնակին յալով մարդիկ,
երկու շքեղ լաւ դռներով,
եւ եւ մուտս առնեն միով:

Յովհ. Միրզաբէկեանց:

Ա. Զ. Դ.

Մի քանի բանաւոր պատ-
ճառներէ ստիպեալ տպա-
բանը մի ամիս պիտի դա-
դարի՝ ուստի յաջորդ օգոս-
տոս ամսագրոյն սակաւ ինչ
ուշանալուն համար կը յու-
սամք, որ մեր սիրելի Ազգա-
յինք ներողամիտ կը լինին:

Ներկայ Թուոյս 35 երեսի առաջին էջին ծանօ-
թութեան մէջ դրուած հրեշտակայնս, պէտք է հր-
եշտակապետն. ընթեանույ:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿՈՒՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՅԵԻ